ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

06 օգոստոսի 2025 թվականի թիվ 96-Ա

ք. Երևան

«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի հուլիսի 22-ին դիմումի հիման վրա հարուցված թիվ 8 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

2025 թվականի հուլիսի 22-ին Հանձնաժողով մուտքագրված «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Հանրային հեռարձակող) դիմումում նշված է, որ տեսալսողական մեդիածառայություն մատուցող «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կրկին անտեսել է Հանրային հեռարձակողի՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված բացառիկ իրավասությունը հեռարձակելու Հայաստանի ազգային հավաքականի մասնակցությամբ ֆուտբոլային հանդիպումները:

Դիմումում մասնավորապես նշված է, որ 2025 թվականի հունիսի 06-ին և հունիսի 09-ին «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությունը հեռարձակել է Հայաստանի ազգային հավաքականի մասնակցությամբ «Կոսովո-Հայաստան» և «Չեռնոգորիա-Հայաստան» ֆուտբոլային հանդիպումները, ինչը պարունակում է Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության դիմումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 2025 թվականի հուլիսի 22-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 8 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի հուլիսի 23-ի թիվ Ե/04/04.1/622-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և խնդրել սեղմ ժամկետում Հանձնաժողով ներկայացնել վերոնշյալ ֆուտբոլային հանդիպումների ձայնագրությունները և քննարկվող հարցի վերաբերյալ պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը 2025 թվականի օգոստոսի 06-ին Հանձնաժողով ներկայացրած իր պարզաբանման մեջ հայտնել է, որ *«Ֆասթ մեդիա» ՍՊ ընկերության և Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) միջև 2021թ. դեկտեմբերի 13-ին կնքվել է Մեդիա իրավունքների պայմանագիր, համաձայն որի՝ ՈՒԵՖԱ-ն «Ֆասթ մեդիա» ՍՊ*

*ընկերությանը շնորհել է մի շարք իրավունքներ, այդ թվում գրության մեջ նշված ֆուտբոլային հանդիպումների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակման **բացառիկ** իրավունքները: Նշել է, որ ինքնստինքյան հասկանալի է, որ վերոնշյալ իրավունքներն ամբողջությամբ օրինական հիմունքներով իրավատիրոջ կողմից փոխանցվել են Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միությանը, որն էլ, իր հերթին, դրանք օրենքով սահմանված հիմքերով և կարգով պայմանագրի հիման վրա փոխանցել է «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությանը:*

Ի հավաստումն վերոնշյալի՝ կից ներկայացրել է ՈՒԵՖԱ-ի կողմից տրամադրված պաշտոնական գրությունը, որով հավաստվում է ՈՒԵՖԱ-ին քննարկվող իրավունքների պատկանելիությունը և վերջինիս կողմից դրանց՝ օրինական հիմքերով փոխանցումը «Ֆասթ մեդիա» ՍՊ ընկերությանը:

Նաև Հանձնաժողովի կողմից գրությամբ մատնանշված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգավորման վերաբերյալ, հայտնել է, որ Օրենքի վերոնշյալ դրույթի բնույթից ելնելով՝ դրանով սահմանված պահանջի ապահովման պարտականությունը դրված է Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների բացառիկ գույքային իրավունքների իրավատերերի վրա (քննարկվող դեպքում՝ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի վրա): Մինչդեռ ստեղծված իրավիճակում վերջինս, փաստորեն, Հայաստանի ազգային հավաքականի մասնակցությամբ ֆուտբոլային խաղերի տարածման իրավունքներն ամբողջությամբ՝ առանց որևէ վերապահման, փոխանցել է Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միությանը, իսկ վերջինս էլ՝ «Ֆասթ Մեդիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

«Ֆասթ մեդիա» ՍՊ ընկերությունը հանդիսանում է քննարկվող իրավունքների բարեխիղճ ձեռքբերող, թույլ չի տվել որևէ խախտում, օրենքի շրջանակներում մասնակցել է Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության հայտարարած մրցույթին, որի արդյունքներով՝ կնքվել է համապատասխան պայմանագիր:

Ավելին, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարևոր իրադարձությունների շրջանակը հաստատում է կարգավորող պետական մարմինը: Մինչդեռ, կարգավորող պետական մարմինը նման շրջանակ չի հաստատել, ինչը քննարկվող իրավակարգավորումը դարձնում է թերի և առարկայազուրկ: Հեռարձակողը պնդել է, որ քանի դեռ չկա կարևոր իրադարձությունների հաստատված շրջանակ, հնարավոր չէ պնդել, որ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ այս կամ այն իրադարձությունը հեռարձակելն օրենքի խախտում է:

Եթե օրենսդրի նպատակը լիներ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ բոլոր իրադարձությունների հեռարձակման բացառիկ իրավունքը տրամադրել Հանրային հեռարձակողին, ապա օրենքով հենց այդպես էլ կնախատեսվեր:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Ֆասթ մեդիա» ՍՊ ընկերությանը վարչական պատասխանատվության հիմքերն իսպառ բացակայում են:

22.07.2025 թվականին «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 8 վարչական վարույթի շրջանակներում էական փաստերն են.

1. Հեռարձակողի նկատմամբ թիվ 8 վարչական վարույթ հարուցելու իրավական հիմքը Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթի պահանջի առերևույթ խախտման հատկանիշների առկայությունն է.
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը 2025 թվականի հուլիսի 22-ին դիմում է ներկայացրել Հանձնաժողով առ այն, որ տեսալսողական մեդիածառայություն մատուցող «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը 2025 թվականի հունիսի 06-ին և հունիսի 09-ին հեռարձակել է Հայաստանի ազգային հավաքականի մասնակցությամբ «Կոսովո-Հայաստան» և «Չեռնոգորիա-Հայաստան» ֆուտբոլային հանդիպումները:
3. Հանձնաժողովը 22.07.2025 թվականին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 8 վարչական վարույթը.
4. Հանձնաժողովը 23.07.2025 թվականի թիվ Ե/04/04.1/622-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին հարուցված վարչական վարույթի վերաբերյալ՝ առաջարկելով ներկայացնել պարզաբանումներ, բացատրություններ և ֆուտբոլային հանդիպումների ձայնագրությունները.
5. Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ իր պարզաբանումները ներկայացրել է 2025 թվականի օգոստոսի 6-ի Հանձնաժողովի նիստի ընթացքում՝ վարչական լսումների ժամանակ:

Այսպես.

Ուշադրության է արժանի այն փաստը, որ սա «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ նկատմամբ հարուցված առաջին վարչական վարույթը չէ: 2025 թվականի հունիսի 2-ին Հանձնաժողովը թիվ 71-Ա որոշմամբ արդեն իսկ Հեռարձակողի նկատմամբ կիրառել էր վարչական տույժ՝ հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների խախտումը, ինչը վերաբերում էր նմանատիպ իրավախախտմանը: Սույն վարչական վարույթի շրջանակում արձանագրված և քննարկվող վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստերն են հանդիսացել.

1. Հեռարձակողի նկատմամբ թիվ 29 վարչական վարույթ հարուցելու իրավական հիմքը Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթի պահանջի առերևույթ խախտման հատկանիշների առկայությունն է.
2. «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 2022-2028 թթ. ՈՒԵՖԱ-ի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումների ցուցադրման իրավունքի ձեռքբերման նպատակով մասնակցության հայտ էր ներկայացրել ՈՒԵՖԱ-ի կողմից անցկացվող մրցույթին (այսուհետ նաև՝ Մրցույթ).
3. Հեռարձակողը նույնպես մասնակցել է Մրցույթին.
4. Մրցույթում հաղթող է ճանաչվել Հեռարձակողը՝ ցուցադրման իրավունքների ձեռքբերման դիմաց ավելի բարձր արժեք առաջարկելով.
5. 13.12.2021 թվականին ՈՒԵՖԱ-ի և «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ի միջև կնքվել է մեդիայի իրավունքների պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր).
6. 2022 թվականին «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության միջև կնքվել է ենթալիցենզիայի

պայմանագիր, որով «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության կողմից «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը փոխանցվել են ՈՒԵՖԱ-ից ձեռք բերված որոշ ոչ բացառիկ իրավունքներ.

7. Հանձնաժողովը 21.03.2025 թվականին թիվ Ե/03/03.1/242-25 գրությամբ «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությունից պահանջել է ներկայացնել հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերը.
8. 26.03.2025 թվականին Հեռարձակողը Հանձնաժողովին է ներկայացրել ՈՒԵՖԱ-ից ստացած գրություն, որով հավաստվել է, որ «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությունն ունի որոշակի մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետությունում տարածելու բացառիկ իրավունք.
9. Հանձնաժողովը 26.03.2025 թվականին թիվ Ե/01/03.1/263-25 գրությամբ դիմել է Հանրային հեռարձակողի խորհուրդ՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ինչ պատճառաբանությամբ «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության «Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք» ծրագրով 20.03.2025 թվականին և 23.03.2025 թվականին չեն հեռարձակվել ՈՒԵՖԱ Ազգերի լիգայի անցումային փլեյ-օֆֆ փուլի «Հայաստան-Վրաստան» և «Վրաստան-Հայաստան» ֆուտբոլային հանդիպումները.
10. 14.04.2025 թվականին «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը պատասխանել է Հանձնաժողովի 26.03.2025 թվականի գրությանն ու հայտնել, որ «*ՈՒԵՖԱ-ի կողմից՝ ՀՀ-ում հեռարձակման իրավունքը տրամադրվել է ավելի բարձր արժեքով առաջարկ ներկայացրած ընկերությանը, ինչի պարագայում Հանրային հեռուստաընկերությունն իրենից անկախ պատճառներով զրկվել է իր բացառիկ իրավունքից՝ հեռարձակելու ֆուտբոլի ազգային հավաքականի հանդիպումները*:».
11. Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 02-ին, հիմք ընդունելով Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 20-րդ մասով, «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության նկատմամբ ընդունել է վարչական տույժ կիրառելու մասին թիվ 71-Ա որոշումը և 03.07.2025 թվականին «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 02-ի թիվ 71-Ա որոշման մեջ վրիպակն ուղղելու մասին» թիվ 82-Ա որոշումը, համաձայն որի՝ տուգանքի չափը կազմել է 267 450 (երկու հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում արձանագրում ենք հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հանդիսանում է անկախ կարգավորող պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, ինչպես նաև վերահսկում է հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենքի պահանջներին:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 25-րդ կետերը սահմանում են Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, այդ թվում՝

«24)բացառիկ իրավունք՝ այլ անձանց մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը որոշակի աշխարհագրական տարածքում տարածելու բացառիկ իրավունք.

25)կարևոր իրադարձություն՝ պետական կամ համազգային նշանակության քաղաքական, մշակութային, կրոնական, մարզական կամ դրանց իրենց նշանակությամբ համարժեք իրադարձություն.»:

Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«6.Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների ամբողջական տարածման բացառիկ իրավունքը պատկանում է Հանրային հեռարձակողին:»:

Հանձնաժողովի իրավական դիրքորոշումը հետևյալն է.

Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը ներկայացնում է կոնկրետ, հստակ և եզակի դեպք, որն օրենքով արդեն իսկ բացառապես ճանաչված է որպես «կարևոր իրադարձություն», այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ միջոցառումները:

Հանձնաժողովն արձանագրում է՝

1. Նշված իրավական նորմը իր էությամբ հանդիսանում է ուղղակի կիրառելի, այն է՝ հիշյալ կարգավորումը կիրառելու համար առկա չէ Օրենսդրական պահանջ հավելյալ կարգավորող ենթաօրենսդրական ակտի ընդունման վերաբերյալ:
2. Օրենքն ինքնուրույն հստակ և առանց այլ իրավական ակտի մատնանշում է կարևոր իրադարձության հատուկ տեսակ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ, որի տարածման բացառիկ իրավունքը պատկանում է Հանրային հեռարձակողին:
3. Նման ձևակերպմամբ օրենքը Հանրային հեռարձակողին է վերապահում իրավական առավելություն բացառիկ իրավունքի տեսքով, որն օժտված է անմիջական գործողության իրավական ուժով:
4. Հանձնաժողովը՝ որպես լիազոր մարմին, պարտավոր է վերահսկել այս բացառիկ իրավունքի իրացումը և օրենքով սահմանված կարգով արձանագրել և գնահատել հնարավոր խախտումները÷

Այսպիսով՝

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը հանդիսանում է անմիջական կիրառելի իրավական նորմ, որն ունի անհրաժեշտ իրավաբանական ուժ և բավարարում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Օրենքով վերապահված բացառիկ իրավունքի ցանկացած խախտում՝ մասնավորապես այլ հեռարձակողների կողմից նշված իրադարձությունների ամբողջական կամ մասնակի հեռարձակում առանց Հանրային հեռարձակողի համաձայնության, կարող է որակվել որպես օրենքի պահանջների խախտում և առաջացնել համապատասխան իրավական պատասխանատվություն:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ է Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում առանձնացվել հենց Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությունը: Այսպես, Հանձնաժողովը պնդում է, որ սա արվել է այն պատճառաբանությամբ, քանի որ Օրենսդիրը ցանկացել է որոշ կոնկրետ իրադարձությունների համար նախատեսել հատուկ տեսակ՝ բացառիկ իրավունք:

Վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողից ստացած պարզաբանման վերաբերյալ Հանձնաժողովը կրկին ամրագրում է հետևյալը.

«Ֆասթ մեդիա» ՍՊ ընկերության կողմից պայմանագրի կնքման վերաբերյալ արված պնդման առնչությամբ հայտնում ենք, որ Հանձնաժողովը չի վիճարկում 2021 թվականի դեկտեմբերի 13-ին նշված ընկերության և Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) միջև կնքված Մեդիա իրավունքների պայմանագրի իրավաչափությունը:

Հղում կատարելով ՈՒԵՖԱ-ի կողմից ներկայացված գրությանը՝ ամրագրում ենք, որ վերջինս «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ին տրամադրել է մեդիայի որոշակի իրավունքներ՝ ՈՒԵՖԱ ՄԻՀ Մրցաշարերի շրջանակներում անցկացվող խաղերի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող Հայաստանի ազգային հավաքականի խաղերի («ՄԻՀ 22-28 Մեդիայի Իրավունքներ»)՝ դրանց բացառիկ օգտագործման իրավունքով: Հաշվի առնելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով բացառիկ իրավունքի սահմանումը՝ որպես այլ անձանց մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը որոշակի աշխարհագրական տարածքում տարածելու բացառիկ իրավունք, Հանձնաժողովն ամրագրում է, որ ՈՒԵՖԱ-ն «Ֆասթ Մեդիա» ՍՊԸ-ին տրամադրել է ՈՒԵՖԱ-ին պատկանող մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետությունում տարածելու բացառիկ իրավունքը:

Այսպիսով, արձանագրում ենք, որ վերոնշյալ դիրքորոշումից չի բխում, որ Հեռարձակողին տրվել են հեռարձակման իրավունքներ:

Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 06-ի նիստի ժամանակ Հեռարձակողի ներկայացուցչի հղումը «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության միջև 2022 թվականին կնքված ենթալիցենզիայի պայմանագրին՝ ներկայացուցչի խոսքի բառացի փոխանցմամբ, «*ՈՒԵՖԱ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսվում է հստակ ծավալ, որը պետք է հանրային սլոթի շրջանակում հեռարձակել*», վկայում է նաև այն մասին, որ Հեռարձակողը իրազեկ է եղել «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության՝ Հայաստանի ազգային հավաքականի խաղերի հեռարձակման բացառիկ իրավունքի գոյության մասին, որն ամրագրված է տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությամբ, ինչպես նաև իրազեկ է եղել իր դերին՝ իրավախախտման առերևույթ գործընթացում: Միաժամանակ նշում ենք, որ նշված պայմանագիրը չի ներկայացվել Հանձնաժողով. ելնելով ներկայացուցչի խոսքերից՝ գտնում ենք, որ Հեռարձակողի կողմից «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը ՈՒԵՖԱ-ից ձեռք բերված որոշ ոչ բացառիկ իրավունքների փոխանցման պարտավորությունը, այդ թվում, բխում է Հեռարձակողի և ՈՒԵՖԱ-ի միջև կնքված վերոնշյալ քաղաքացիաիրավական պայմանագրից, որը Հեռարձակողի կողմից չի կատարվում:

Քննարկվող համատեքստում կարևորում ենք նշել՝ քաղաքացիաիրավական պայմանագրից բխող պարտավորությունները և վարչական օրենսդրությամբ սահմանված պարտականությունները տարբեր իրավական բնույթի են. առաջինները պայմանավորվում են պայմանագրային կողմերի փոխհամաձայնությամբ և վերահսկվում են մասնավոր իրավունքի նորմերով, մինչդեռ երկրորդները ուղղակիորեն սահմանվում են օրենքով և պարտադիր են կատարման համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը 2023 թվականի սեպտեմբերի 22-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 352, գործողության ժամկետը՝ 23.09.2023թ. - 23.09.2030թ.), որը կազմում և սպառողին է

ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ: Վերջինս պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված հետևյալ սահմանափակումը, այն է՝ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների ամբողջական տարածման բացառիկ իրավունքը պատկանում է Հանրային հեռարձակողին:

Ավելին, օրենսդրությամբ սահմանված լիազորություններն ու գործընթացները ենթակա չեն փոփոխման քաղաքացիաիրավական համաձայնությամբ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է բացառիկ պետական լիազորությունների իրականացմանը: Նույնիսկ այն դեպքում, երբ քաղաքացիաիրավական պայմանագրում նշվում է «բացառիկ հեռարձակող» ձևակերպումը, Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված բացառիկ իրավունքը, որը վերապահված է «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը, ունի իրավական գերակայություն և առաջնահերթ կիրառություն:

Հանձնաժողովը համանման իրավախախտումն արձանագրելիս կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների հեռարձակման նկատմամբ տարածվող օրենսդրական սահմանափակումը, ըստ էության, կապված է հանրային շահի հետ, որը տվյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես, իր մեջ ներառում է հանրային իրազեկված լինելու, ազգային հավաքականների մրցումների անխափան և համընդհանուր հասանելիության ապահովման, ինչպես նաև մշակութային և ազգային ինքնության պահպանման ապահովման կարիքը: Հաշվի առնելով քննարկվող իրավահարաբերության կարգավորման իմպերատիվ բնույթը՝ Հեռարձակողը պարտավոր է պահպանել Օրենքի հիշյալ պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 20-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում,
2) տուգանք,
3) հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության կասեցում,
4) հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ Օրենքի 8-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 02-ի ««ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 71-Ա որոշմամբ և 2025 թվականի հուլիսի 03-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 02-ի թիվ 71-Ա որոշման մեջ վրիպակն ուղղելու մասին» թիվ 82-Ա որոշմամբ Հեռարձակողը վարչական պատասխանատվության է ենթարկվել Օրենքի 57–րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ տուգանվելով Հասույթի 0.02 տոկոսի չափով՝ 267 450 (երկու հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր հիսուն) դրամ: Վարչական տույժ կիրառելու հիմք է հանդիսացել Հեռարձակողի կողմից Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված հետևյալ սահմանափակման խախտումը՝ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների ամբողջական տարածման բացառիկ իրավունքը պատկանում է Հանրային հեռարձակողին, ինչը նույնական է նաև տվյալ դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

«1. Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝

«4. Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:»:

Հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 02-ի թիվ 71-Ա որոշումը «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությանն է ուղարկվել Հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 03-ի թիվ Ե/04/04.1/492-25 գրությամբ: Ըստ գրության ստացման ծանուցագրի՝ Հեռարձակողն այն ստացել է 2025 թվականի հունիսի 06-ին: Ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն և հաշվի առնելով, որ 2025 թվականի հունիսի 7-ը և հունիսի 8-ը ոչ աշխատանքային օրեր են՝ թիվ 71-Ա որոշումը ուժի մեջ է մտել 2025 թվականի հունիսի 9-ին:

Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասը սահմանում է.

«Սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է փուգանքի նշանակում՝ կիրառված փույժի եռապատիկի չափով:»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը մեկ տարվա ընթացքում կրկնել է նույն խախտումը՝ Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների հեռարձակում է իրականացրել առանց Հանրային հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու, ինչը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասի հատկանիշներին:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 25-րդ կետերը, 8-րդ հոդվածի 6-րդ մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 20-րդ և 31-րդ մասերով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով 802 350 (ութ հարյուր երկու հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Ֆասթ Մեդիա» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 06
ք.Երևան